

**«ԼՂՅ (ԱՐՑԱԽԻ) 25-ԱՄՅԱ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ԶԵՌԵԲԵՐՈՒՄՆԵՐՆ ՈՒ  
ԱՐԴԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ»**

միջազգային երիտասարդական գիտաժողով

15-18 սեպտեմբերի 2016թ.

Արցախ (ԼՂՅ), ք.Ստեփանակերտ

**ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ**

**«25-ЛЕТИЕ ГОСУДАРСТВЕННОСТИ НКР  
(АРЦАХА):**

**ДОСТИЖЕНИЯ И СОВРЕМЕННЫЕ ВЫЗОВЫ»**

международная молодёжная конференция

15-18 сентября 2016г.

Арцах (НКР), г.Степанакерт

**СБОРНИК МАТЕРИАЛОВ**

ԱԵԳԱՄ-ՕՄՍԱ

ԵՐԵՎԱՆ-ԵՐԵՎԱՆ

2016

Յրատարակության Երաշխավորվել Ստեփանակերտի Մերուպ Մաշտոց  
համայնքանի Գիտական խորհրդի որոշմամբ  
Рекомендовано к публикации решением Ученого совета  
Университета Месроп Мащтоц г.Степанакерта

ՀՏԴ 94(479.25):32.001:342:06

ԳՄԴ 63.3 (53)+66.0+67.400

Լ 657

### Խմբագրական խորհուրդ

ի.գ.դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ ակադ. **Գ.Ս.Ղազինյան** (նախագահ), փ.գ.դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ **Ա.Ս.Մանասյան**, հ.գ.դ., պրոֆ. **Հ.Ս.Ավամեսյան**, պ.գ.դ., պրոֆ. **Վ.Ռ.Բալյայան**, ի.գ.դ. **Վ.Վ.Գրուզդև**, ի.գ.դ., պրոֆ. **Ա.Յ.Խաչատրյան**, բ.գ.դ., պրոֆ. **Մ.Ս.Մարգարյան**, բ.գ.դ. **Ս.Մ.Ավամեսյան**, տ.գ.դ., պրոֆ. **Յ.Լ.Սարգսյան**, պ.գ.թ., դոց. **Ն.Է.Քաղդասարյան**, բ.գ.թ., դոց. **Խ.Յ.Գալստյան**, տ.գ.թ., դոց. **Ե.Ռ.Յայրիյան**, ի.գ.թ. **Ա.Յ.Նարությունյան**, ի.գ.թ., դոց. **Ա.Ա.Մանասյան**, ի.գ.թ., դոց. **Ս.Գ.Պետիկյան**

### Редакционная коллегия

д.ю.н., проф., акад. НАН РА **Г.С.Казинян** (председатель), д.ф.н., проф., член кор. НАН РА **Ա.Ս.Մանասյան**, д.п.н., проф. **Գ.Մ.Ավանեսյան**, д.и.н., проф. **Վ.Բ.Բալայն**, д.ю.н. **Վ.Բ.Գրզծեա**, д.ю.н., проф. **Ա.Գ.Խաչատրյան**, д.п.н., проф. **Մ.Մ.Մարգարյան**, д.п.н. **Ս.Մ.Մինասյան**, д.э.н., проф. **Գ.Լ.Սարգսյան**, կ.и.ն., доц. **Ն.Է.Բագդասարյան**, կ.п.н., доц. **Խ.Ը.Գալստյան**, կ.э.н., доц. **Ե.Ր.Այրիյան**, կ.ю.н. **Ա.Գ.Արյունյան**, կ.ю.н., доц. **Ա.Ա.Մանասյան**, կ.ю.н., доц. **Ս.Գ.Պետիկյան**

Լ 657 «ԼՂՅ (Արցախի) 25-ամյա պետականության ձեռքբերումներն ու արդի մարտահրավերները» միջազգային երիտասարդական գիտաժողովի նյութերի ժողովածու – Եր.: ԱԵԳՄՄ, 2016, 320 էջ:

Ժողովածում ներառված են «ԼՂՅ (Արցախի) 25-ամյա պետականության ձեռքբերումներն ու արդի մարտահրավերները» խորագրով միջազգային երիտասարդական գիտաժողովի նյութերը:

В сборнике включены материалы международной молодёжной научной конференции «25-летие государственности НКР (Арцаха): достижения и современные вызовы».

ՀՏԴ 94(479.25):32.001:342:06  
ԳՄԴ 63.3 (53)+66.0+67.400

ISBN 978-9939-1-0465-2

© Արցախի երիտասարդ գիտնականների և  
մասնագետների միավորում, 2016

## ԱՐՅԱՆԻ ԵՐԿԱԹԵՂԱՐՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԾՈՒՐԱ ՔԱՐԵ ՄԱՐԴԱԿԵՐՊ ԿՈԹՈՂՆԵՐԸ

**Նժեի ԵՐԱՎՅԱՆ**  
**ՀՀ ԳԱԱ հևագիտության և**  
**ազգագրության ինստիտուտ, պ.գ.թ.**  
**nidehyan90@yahoo.com**

Արցախի քարե մարդակերպ կոթողները երկրամասի նախաքրիստոնեական մշակույթի կարևոր բաղկացուցիչներից են: Այս տարածքը խորհրդային տարիներին հայտնի պատճառներով բավարար չափով չի ուստամասիրվել<sup>1</sup>: Եղած հետազոտություններու նկատմամբ բաղաքանացված են: Սա վերաբերում է նաև մարդակերպ կոթողներին, որոնք աղրբեջանական որոշ հետազոտողներ ներկայացրել են որպես աղվանական՝ փորձելով դրանց տարածվածությունը հատկապես Արցախում դիմել որպես աղվանական էթնոմշակութային սուբստրատի առկայություն: Ուստի այդ հուչարձանների հետազոտությունը, նրանց հստակ ժամանակագրության և էթնոմշակութային պատկանելության խնդիրների ընությունը ներկայացնում է ոչ միայն գիտական հետաքրքրություն, այլև հնարավորություն է տալիս մերժել աղրբեջանական զեղծարարությունները:

Կոթողները թեև առանձին օրինակներով հայտնի են դարձել դեռ անցած դարի 60-ական թվականներին, սակայն նրանց տեխնիկական, պատկերագրական, իմաստաբանական քննություննը, նրանց ժամանակագրությունը և հնարավոր էթնոպատկան խնդիրները մնում են չմասնական վայրելու մասնակի աղայի ազատագրական պատերազմի արդյունքում նոր հնարավորություններ ստեղծվեցին նաև տարածաշրջանի հնագույն պատմության և մշակույթի հետազոտության համար: Մարդակերպ կոթողների Փիզիկական մատչելիությունն այն էական իրողությունն ու հանգամանքն էին, որոնք հնարավորություն ստեղծեցին իրականացնել դրանց մանրամասն նկարագրությունը, չափագրումը, լուսանկարումը, ինչպես նաև պատմամշակութային միջավայրի հետազոտությունը:

Կոթողների թիվն, ըստ այսօր ուսեցած տվյալների, հասնում է 22-ի: Ֆիզիկապես մեզ հասանելի է եղել 20 կոթող, երկուսի մասին տեղեկություն ենք քաղել լուսանկարներից և 3. Պետրոսյանի դաշտային օրագրից: Այս կոթողները լայնական կորվածքում մոտավորապես ուղղանկյուն, տափակ երկայնական սալեր են, որոնք երկու հորիզոնական լայն ակոս-գրտիների միջոցով բաժանվում են երեք մասի՝ «առանձնացնելով» մարմնի

<sup>1</sup> **Պետրոսյան Յ.**, Մշակութային էթնոգիրն Արցախում (մշակութային ժառանգության բռնարկացման մեխանիզմը), Աղրբեջանի պետական ահաբեկչություննը և էթնիկական զուտմերի բաղաքականությունը Լեռնային Ղարաբաղի դեմ, Ծուշի, 2010, էջ 137-148:

Երեք մասերը՝ գլուխը, որը զբաղեցնում է ամբողջ կոթողի մեկ երրորդից մի փոքր քիչ ծավալ, իրանը և գոտկատեղից ներքևի հատվածը: Իրանից ներքևի հատվածը սովորաբար թեթև հղկվում էր: Այս նախատեսված է եղել հոդի կամ հատուկ հիմքի մեջ դնելու համար: Կոթողներն ունեն մոտավորապես 30-60 սմ լայնություն, 120-160 սմ (Եզակի դեպքերում մինչև 2 մ), բարձրություն և մոտավորապես 20 սմ հաստություն: Հայտնի բոլոր կոթողները պատրաստված են կրաքարից, որի ընդարձակ նստվածքները և հին մշակումների հետքերով հանցերը լայնորեն տարածված են Արցախի առևելյան և ամենալայն կոթողներում: Կարելի է փաստել, որ արցախյան կոթողների պատկերագրությունը խիստ սիեմատիկ է, ժլատ, ակնհայտորեն չեն պատկերվում մարմնակազմական շատ մարմամասներ, թեև դրանց «առկայությունը» ենթադրելի է:

Արցախի քարե մարդակերպ կոթողների ուսումնասիրությունն անհնար է առանց համեմատական նյութի և զուգահեռների քննության: Այս առումով ներկա քննության կարևոր տեսական և մեթոդաբանական ասպեկտներից մեկն էլ արցախյան կոթողներն ընդարձակ առաջավրասիական մշակութային համատեքստ մոցնելն է՝ պահելով ժամանակային սկզբունքը: Առաջավոր զսիայում և Եվրասիական տափաստաններում քարե մարդակերպ կոթողները երևան են գալիս սկսած մ.թ.ա. 4-3-րդ հազարամյակներից: Քարե մարդակերպ կոթողները առավել ակտիվ սկսում են տարածվել մ.թ.ա. 2-րդ հազարամյակի վերջում և 1-ին հազարամյակի սկզբում, ինչն, ըստ երևույթին, կապված է վաղիրանական ցեղերի, հատկապես կիմմերա-սկյութական ցեղերի տեղաշարժերի հետ:

Առաջին մարդակերպ կոթողները հայտնաբերվել են Մարտակերտի տափաստանային մասի մի շարք վայրերից: Այսօր դրանց կուտակումներ կան Արցախի Տիգրանակերտի, ինչպես նաև Վերջինից ոչ հեռու գտնվող Գյավուրկալա քնակատեղիի շրջակայքում: Այս միջավայրից մի քանի կրթող դեռևս խորհրդային տարիներին տեղափոխվել է Արցախի պետական և Մարտակերտի պատմա-երկրագիտական թանգարաններ, իսկ մի մասը շարունակում է ընկած մնալ բաց դաշտում<sup>1</sup>:

Կարելի է նշել, որ կոթողների տեղագրությունը շատ բազմազան չէ: Հայտնաբերման օջախները կարող ենք դասակարգել ըստ հետևյալի՝

- ա. Մարտակերտ (Բախչուն թափա),
- բ. Սեյսուլան,
- գ. Կարմիրավան,
- դ. Ճանկաթառ,
- ե. Գյավուրկալա և շրջակայք

<sup>1</sup> Երանյան Ն., Արցախի քարե մարդակերպ կոթողները, ԵՊՀ ՈՒԳԸ Գիտական հոդվածների ժողովածու, հուն. 3, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2012, էջ 168-172, Երանյան Ն., Մարտակերտի քարե մարդակերպ կոթողները (պատկերագրությունը և տիպաբանությունը), Հայ գրատպության 500-ամյակին և ԵՊՀ ՈՒԳԸ հիմնադրման 65-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի հոդվածների ժողովածու, հուն. 4, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2013, էջ 110-113:

## գ. Սալահլու:

Մրանքը այն հիմնական օջախներն են, որտեղ պատրաստվել և կանգնեցվել են այս կոթողները: Պետք է նշել, որ ինչպես նախկինում հայտնաբերված, այնպես և նորահայտ կոթողներից որևէ մեկը ներկայումս իր նախնական կանգնեցման վայրում (*in situ*) չէ: Սակայն մի բան ևս ակնհայտ է. ամենայն հավանականությամբ կոթողներն իրենց երկրորդական օգտագործման վայր շատ հեռվից չեն տեղափոխվել:

Քննության առևելով և համարելով Արցախի քարե մարդակերակոթողների հայտնաբերման տեղեկությունները, կարող ենք փաստել, որ կոթողները հայտնաբերվել են ծովի մակերևութից մինչև 500 մ բարձրության վրա: Այսինքն՝ այս գոտին, որտեղից հայտնաբերվել են կոթողները, ամբողջությամբ համապատասխանում է Արցախի մարզագետնա-տափաստանային գոտուն: Բոլոր թվարկված օջախները գտնվում են Խաչենագետի Ներքնահովտում (այստեղ, ուր գետը դուրս է գալիս տափաստան) կամ Նրա շրջակայքում: Ուստիմասիրվող տարածքը գրանցվում է Փոքր Կովկասի հարավարևելյան հատվածը՝ ընդգրկելով Կուր-Վրաքսյան դաշտավայրի արևմտյան մասը՝ Արցախի տափաստանի արևելյան հատվածը և Նրանից արևելք ընկած Միլի տափաստանի ծայր արևմուտքը<sup>1</sup>:

Կարելի է նշել, որ ինչպես մոտ գուգահեռների քննությունը, այնպես և քննարկվող կոթողների պատկերագրական որոշ դետալներ (ձեռքերի դիրքը, դաշույնների տիպը, եղերագավառի բացակայությունը) և քանդակման տեխնիկան (ուսերի և վահ բացակայություն, «փակ աչքեր» և այլն), հիմք են տալիս կոթողները թվագրել մ.թ.ա. 8-րդ դարի վերջերից մինչև մ.թ.ա. 6-րդ դարի սկիզբն ընկած ժամանակով: Այս ժամանակագրական միջակայքը չի ենթադրում նշված դարերի ընթացքում Նրանց անընդմեջ գոյությունն այս շրջաններում: Ներկա քննությամբ սահմանել ենք վերին և ստորին ժամանակագրական սահմանները, որում այս կոթողները կարող են կանգնեցված լինել:

Քանդակի տեխնիկական համեստ գինանոցը, պատկերագրական սխեմատիզմն ու «Ժլատությունը» հևարավորությունն են տալիս հավատել, որ ի դեմս արցախյան կոթողների, գործ ունենք մի ընդարձակ պատմամշակութային երևույթի նախնական դրսորման հետ: Այս տեսակետից ուշագրավ են հատկապես այն նմանությունները, որ առկա են կիմմերական և վահ սկյուրթական կոթողների միջև: Կարծում ենք, սա բավարար իմբը է տալիս ենթադրել, որ արցախյան կոթողները վերաբերում են բավական ընդարձակ տարածություն ընդգրկող քարե մարդակերպ կոթողների վաղ խմբին: Յավանական է, որ Արցախում այս կոթողների

<sup>1</sup> Ինչպես հայտնի է Արցախի տափաստանը և սրանից արևելք Միլի տափաստանը գրանցվում են Կուր-Վրաքսյան ընդարձակ դաշտավայրի մի մասը՝ գրավելով Կուրի աջափնյակը: Կուր-Վրաքսյան դաշտավայրն իր հերթին ամենամեծն է այս շրջանում: Այն հանդիսանում է ընդարձակ Արևելա-Անդրկովկասյան դաշտավայրի մի մասը, որն սկսում է Ակազանի ստորին հովիտից: Կուր-Վրաքսյան դաշտավայրի մակերեսը՝ Մինգեառուրից մինչև Կասպից ծով ավելի քան երկու մլն. հեկտար է:

հայտնվելը կարող էր կապված լինել կիմմերների և սկյութների Առաջավոր Ասիա առաջին Ներթափակացման հետ, ինչը սկսել է մ.թ.ա. 8-րդ դարից:

Չանի որ չի հաջողվել արցախյան կոթողները վավերացնել իրենց կանգնեցման նախնական վայրում, նրանց գործառույթի հարցը պարզեցի համար հարկավոր է դիմել զուգահեռ նյութի հետ համեմատական քննությանը: Կարելի է եղակացնել, որ Արցախից հայտնաբերված կոթողները ամենայն հավանականությամբ, հանդիսանում են գերեզմանաքարեր, և կամ պաշտամունքային այլ սիմվոլներ, որոնք պատվանդակի մեջ կամ առանց պատվանդակի տեղակայված են դամբանաբլուրի գագաթին կամ սրբարանի կենտրոնում, չի բացառվում՝ նաև հիմնահողային թաղումների վրա: Այս կոթողները զուտ գերեզմանաքարեր լինելուց բացի, գուցե ունեցել են այլ գործառույթ ևս: Չանի որ կոթողները այս կամ այս կերպ հարաբերվել են օրչվոր կենսակերպ վարող ցեղերի հետ, ովքեր, մշտական բնակավայր չունեին, ուստի դրանք ինչ որ առումով նաև «սահմանաքարի», բաց դաշտում տարածի կողմնորոշման և որոշակի ցուցիչի դեր նույնպես կարող են կատարել: Այս կոթողները կանգնեցվել են կոլեկտիվ որևէ անդամի մահվան դեպքում: Հավանաբար խոսքը գտնվում է մարդու մասին, ով սոցիալական բարձր խավի է պատկանել:

Ամփոփելով կարող ենք նշել, որ Արցախի կոթողների դեպքում գործ ունենք մի մշակութային երևույթի հետ, որի կերտողները մի կողմից առնչվում են Հայկական Լեռնաշխարհի և Առաջավոր Ասիայի նստակյաց մշակույթների կողղների, մյուս կողմից ջուղիութեական տնտեսաձևի հետ: Այսինքն սկսած երկաթի դարից, Հայկական Լեռնաշխարհում ձևավորվել է մշակութային մի ուրույն ենթագոտի, որն ընդգրկել է պատմական Հայաստանի Արցախ և Ուտիշ նահանգները: Զննարկվող մարդակերպ կոթողները ընդամենը մեկն են այդ գոտու յուրահատուկ հատկանիշներից:

### **Նժեռի Երանյան**

**ԱՐՁԱԿԻ ԵՐԿԱԹԵԴԱՐՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՃՈՒՐՁ. ԱՐՁԱԿԻ ԶԱՐԵ  
ՄԱՐԴԱԿԵՐՊ ԿՈԹՈՂՆԵՐԸ**

**Բանալի բառեր՝ Արցախ, մարդակերպ կոթող, Մարտակերտ,  
Տիգրանակերտ**

Առաջավոր Ասիայում և Եվրասիական տափաստաններում քարե մարդակերպ կոթողները երևան են գալիս սկսած մ.թ.ա. 4-3 հազարամյակներից, որոնք առավել ակտիվ սկսում են տարածվել մ.թ.ա. 2-րդ հազարամյակի վերջում և 1-ին հազարամյակի սկզբներում: Մ.թ.ա. 2- 1-ին հազարամյակի առկա լոյթերով Հայաստանը առանձնանում է որոշակի բազմազանությամբ և կարելի է ենթադրել, որ այդ բազմազանության մի դրսնորումն էլ արցախյան կոթողներն են: Սույն հոդվածի հիմնական

Նպատակն է Ներկայացնել Արցախի դաշտային շրջաններից հայտնի 22 քարե մարդակերպ կոթողները, նրանց պատկերագրությունը, ժամանակագրությունը և գործառությունը:

### *Nzhdeh Eranjan*

## **О КУЛЬТУРЕ АРЦАХА В ПЕРИОД ЖЕЛЕЗНОГО ВЕКА: АНТРОПОМОРФНЫЕ КАМЕННЫЕ ИЗВЯНИЯ АРЦАХА**

**Ключевые слова:** *Арцах, Антропоморфные изваяния, Martakert, Tigranakert*

Каменные антропоморфные изваяния появились в передней Азии и Евразийских степях начиная с 4-3 тысячелетий до н.э., и с большей интенсивностью распространились в конце 2-ого, начале 1-ого тысячелетий до н.р. Армения отличается наличием многообразия материалов 2-1 тысячелетия до н.э. и можно предполагать, что одним из проявлений данного многообразия являются арцахские изваяния. Основной целью данной статьи является представления 22 антропоморфных каменных изваяний, их иконографию, хронологию и функцию, которые найдены на территории равнинного Арцаха.

### *Nzhdeh Yeranyan*

## **ON CULTURE OF ARTSAKH DURING THE IRON AGE: ANTHROPOMORPHIC STONE SCULPTURES OF ARTSAKH**

**Key words:** *Artsakh, anthropomorphic stelae, Martakert, Tigranakert*

Anthropomorphic stone stelae are appearing in Southwestern Asia and Eurasian steppes from 4-3<sup>th</sup> centuries BC and most actively started spreading at the end of the 2-1<sup>st</sup> century BC. With the existing materials of 2-1<sup>st</sup> centuries BC Armenia distinguishes with some diversity and it can be assumed that Artsakh stelae are manifestation of this diversity. The main purpose of this article is presenting 22 anthropomorphic stone stelae, their iconography, chronology and function which are found in the territory of Artsakh plain.